ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 09 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 19.01.2009թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 27 հոդվածով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Դիմողի համոզմամբ .«ՀՀ օրենսդրությունը/ ԸՕ 27.1 հոդվածի 1/4 մաս/ վստահված անձի համար սահմանել է բողոքարկելու իրավունք և, հետևաբար, վերջինս պաշտպանելու իրավունք/ Սահմանադրության 18 և 19 հոդվածներ/, որի իրականացումը «թույլատրում են» նաև վարչական և վճռաբեկ դատարանները, մյուս կողմից երկրի սահմանադրական արդարադատությունն իրականացնելու պարտավորություն ունեցող մարմինը, փաստորեն, արգելում է օրենսդրական, այդ թվում, սահմանադրական իրավունքների իրականացումը»:

Դիմողը գտնում է, որ .«...խնդիրը հավանաբար, ԸՕ 27 հոդվածում տեղ գտած օրենսդրական բացթողումներն են»: Դիմողի համոզմամբ այս հոդվածում պետք է տեղ գտներ դրույթ վստահված անձի լիազորությունների ժամկետի մասին և վստահված անձի դատարաններում՝ այդ թվում նաև ՍԴ-ում հանդես գալու իրավասության մասին:

Դիմողը առաջ է քաշել օրենսդրական բացի խնդիր, որն էլ առաջ է բերել իրավական անորոշություն:

ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝